



238

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30407

Ապրիլ 5, 1988

Արժանաշնորհ
Տ. Բարի Քինյ. Մեթճեան
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ունկնուտ.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք Մարտ 25, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 21ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի եօթը անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Մելինէ Սարաֆեան
Ծան Տէրտէրեան
Վահան Հոբլամազեան
Կրէնթ Մազմանեան
Տայան Խաչիկեան
Յովհաննէս Մկրեան
Ռապրթ Զաքեան